ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF
TSAKHKADZOR

2310 ք. Ծաղկաձոր Օրբելի եղբ. 9 Tsakhkadzor city Orbeli Br.9
հեռ. +374 60 703000, էլ. հասցե tsaghkadzor.kotayq@mta.gov.am, info@visittsaghkadzor.com

20 օգոստոս 2025թ.

<<ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ
Տնօրեն Դ.Դանիելյանին
Հասցե՝ ԿԻԵՎՅԱՆ Փ. / Շ / 8 / 62 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0028
Էլ.հասցե՝ sopranoarm@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագրի 5-րդ չափաբաժինը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

Հարգելի՛ գործընկեր

Ծաղկաձորի համայնքապետարանի՝ ի դեմս համայնքի ղեկավար Ն.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ» և «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության, այսուհետ՝ «Վաճառող»-ի միջև 2025 թվականի ապրիլի 21-ին կնքված **ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-1** ծածկագրով, Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության հետ Պայմանագիրը կնքվել է **ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/3 ծածկագրով ընթացակարգի** 1, 5 և 6 չափաբաժինների արդյունքում, որոնցից 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով Ձեր կողմից մատակարարվել են ապրանքները: 5-րդ չափաբաժնի մասով (էլեկտրական սալօջախ) մատակարարում չի իրականացվել:

Ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է համարվել 2025 թվականի մայիսի 30-ը,որը համաձայն Ձեր կողմից ներկայացված դիմումի, համաձայնագիր կնքելու միջոցով երկարաձգվել է՝ մինչև 2025թ. հունիսի 30-ը: Հետևաբար Ձեր կողմից ժամկետը խախտվել է **51 օր:** Բազմիցս փորձել ենք զանգի միջոցով կապ հաստատել,սակայն հեռախոսազանգերին չեք պատասխանել,իսկ էլեկտրոնային փոստին գրված նամակին նույնպես Ձեր կողմից արձագանք չի եղել:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Գնորդը միակողմանի լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն ***որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները և պայմանագրի 8.11 կետը, այն է՝***

Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Պայմանագիրը կհամարվի լուծված Գնորդի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Վաճառողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ Հավելված 3.2 և Հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ որակավորման ապահովում և 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ պայմանագրի ապահովում) ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետական՝ համապատասխանաբար 900008000698 և 900008000664 հաշվեհամարներին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Գնորդը կներկայացնի լիազոր մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կապ. Իրավաբանական, քարտուղարության,անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ /բարեվարքության կազմակերպիչ/ Ս. Ալոյան

+37460680139